ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 փետրվարի 2022 թվականի N 69 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ 2006 ԹՎԱԿԱՆԻՆ ԾՆՎԱԾ ԱՐԱԿԱՆ ՍԵՌԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՑԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Պաշտպանության մասին», «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1269-Ն, 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն և 405-Ն որոշումներով և հիմք ընդունելով 2021 թվականի օգոստոսի 19-ի Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության պետի հրահանգը՝ 2022 թվականի ընթացքում 16 տարին լրացող, ինչպես նաև ավագ տարիքի և սահմանված ժամկետում զինվորական հաշվառում չանցած արական սեռի քաղաքացիների զինվորական հաշվառման աշխատանքները կազմակերպված անցկացնելու նպատակով՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Տավուշի մարզի տարածքային թիվ 1 և թիվ 2 ստորաբաժանումների ղեկավարներին.

1) Կցագրման աշխատանքների նախապատրաստումը և անցկացումը տարածքներում իրականացնել 2022 թվականի փետրվար-դեկտեմբեր ամիսներին «Պաշտպանության մասին», «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1269-Ն, 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն և 405-Ն որոշումների և 2021 թվականի օգոստոսի 19-ի Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային ծառայության պետի հրահանգի պահանջներին համապատասխան,

2) կցագրման աշխատանքների ընթացքի վերաբերյալ յուրաքանչյուր ամիսը մեկ գրավոր տեղեկատվություն ներկայացնել մարզպետարան, իսկ կցագրման ավարտից հետո 10-օրյա ժամկետում արդյունքների մասին ներկայացնել զեկուցագիր,

3) մարզպետի հաստատմանը ներկայացնել 2006 թվականին ծնված պատանիների զինծառայության նախապատրաստման աշխատանքների պլանը,

4) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Տավուշի մարզի տարածքային թիվ 1 և թիվ 2 ստորաբաժանումներ չներկայացած և զինվորական հաշվառումից խուսափող (այդ թվում նաև ավագ տարիքի) քաղաքացիների ցուցակները ներկայացնել Հայաստանի

Հանրապետության ոստիկանության Տավուշի մարզային վարչության տարածքային բաժիններ՝ վերջիններիս կողմից համապատասխան որոնողական աշխատանքներ կազմակերպելու նպատակով:

2. Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին.

1) ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ ենթակա բուժհաստատությունների կողմից կցագրման ենթակա պատանիների ամբողջական հետազոտման աշխատանքները սահմանված կարգով իրականացնելու համար,

2) կցագրման ընթացքում հայտնաբերված հիվանդ, բուժման ենթակա պատանիների բուժումը կազմակերպել այնպես, որ նրանք մինչև զորակոչը լինեն պիտանի ծառայության:

3. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին.

Հանձնարարել ուսումնական հաստատությունների տնօրեններին՝ համագործակցելու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Տավուշի մարզի տարածքային թիվ 1 և թիվ 2 ստորաբաժանումների հետ կցագրման աշխատանքները պատշաճ մակարդակով իրականացնելու նպատակով:

4. Մարզպետարանի տեղական ինքնակառավարման մարմինների և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետին.

Համայնքների ղեկավարների և զորակոչով զբաղվող համայնքային ծառայողների հետ աշխատանքներ տանել՝ կցագրման ենթակա պատանիների ցուցակները սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Տավուշի մարզի տարածքային թիվ 1 և թիվ 2 ստորաբաժանումներ ներկայացնելու ուղղությամբ:

5. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի վարիչ Գ. Մատինյանին:

ՄԱՐԶՊԵՏ ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

22.02.2022

X

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

Ք. Իջևան
2022թ. փետրվարի 22